նին առաջ տանելու համար, և որ 60 մեգր լայն և 5 հազարամեգր երկայն պիտի ըլլայ. Ներսից երկայնութեամբը ուրիշ երկրորդական կամ յարաններ ալ պիտի չենուին, նաւուց ապասանարաք՝ եթէ կրակ և կամ ուրիշ որ և իցէ ձախորդութիւն մը հանդիպի, որով արգելուին իրենց ճամբորդութիւնն ընել։ Իսկ նաւուց ներսանցից մէջ վերջին ատիճան արագութիւնն Ժամը 10 հազարամեգր պիտի ըլլայ, այնպէս որ 8 ժամուան մէջ կը լնցընեն ընթացքնին ուղղակի հաւասար արագութեամբ կարելով ամբողջ Ներսանցը։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԷՅ ՀՆԴԿԱՑ

(Տես էջ 80)։

Գ

Հնդիկ յուզարկաւորութիւնք։ — Այրարողութիւնք յաւիտ Գանգիսի։

Կառքերնիս՝ Պայքալայի բազմամարդ փողոցաց մէջէն հոլովելով դէպ ի քաղաք կը տանէր զմեզ, այլ ոչ կառաց յաճախութիւնը, ոչ անհամար երթևեկաց աղմուկը, և ոչ փոփոխ առարկայից յաջորդութիւնը մեր խօսակցութեան նիւթը կը փոփոխէր։ Երբ ի Ֆորդ մոտենալու կ'ըլլայինք՝ Հնդիկներու բազմութիւն մը բանաթատեց զմեզ ընթացքնիս չափաւորելու։ Գաղդիացին որ դեռ ևս խօսելու հիւանդ էր, այն բազմութիւնը ուշադրութեամբ դիտելով,— Հնդիկ յուզարկաւորութիւն մըն է, կանչեց։ ասոնց ալ արարողութիւնը մի անգամ տեսնալը հետաքրքրական է։ Մեր և Փարսից սովորութեանը հակառակ, ասոնք իրենց մեռելոց դիակները հրով կը ջնջեն։ Բայց ասոնց ալ արարողութեանց սրբավայրը մերձենալը անկարելի է մեզի համար, միայն Մահմետականաց գերեզմանոցէն, որ կից է Հնդկաց սրբավայրին, կարելի է ականատես ըլլալ ասոնց սովորութեանցը։ —

Ամենը՝ ի դէպ կու գար ինձ. քանի որ հետաքրքրութիւնս ջերմացած էր՝ ուզեցի յաջեցնել։ Ընկերքս թողլով՝ համբերութեամբ յուզարկաւորաց հետևեցայ՝ ի բայուստ։ Մեռեալը սուրին դասակարգի ոմն կը թուէր. գոնեա այնպէս գուշակել կու տար յուզարկաւորաց աղքատին ու ռամիկ ելևոյթը։ Թէպէտ և նորեկի մը ամենադժուարին է, եթէ ոչ անկարելի, փոլոցը տեսնուած Հնդիկներէն զանազանել ռամիկը ազնուականէն։ Սովորական է տեսնել զոմանս չորս հինգ սպասաւորաց, որ ցոյց է թէ չեն յանձնանիչ ոմանց. սակայն իրենց գունաթափ հանդերձքն և հնացեալ հողաթափք, և քան զսպասաւորս ոզորմելագոյն կ'երևցուننեն զանոնք։

Բազմութեան առջևէն չորս յուզարկաւոր դիակակիրք կը քալէին, դիակը ծաղիկներով զարդարած՝ դագաղի մը վրայ բաց հանգչեցուցած էր։ Ամենը շտապելով կը քալէին, մեղմաձայն, շարունակեալ ու միակերպ եղանակ մը լսեցնելով։ Շատ շուշացանք կիզման սրբավայրը հասնելու. բարձր պատերով առանձնատեղի մըն էր, ուր յուզարկաւորութեան լրացուցիչ մասը պիտի կատարուէր։ Բազմութիւնը ընդարձակ գետէ մը ներս մտնելով հուսկ ուրեմն ինձ արձակ թողուց. մերձեցայ մը-տից, այլ Հնդիկ պահապանը մուտքս խափանեց. սրբավայրը պղծելու չէր։ Ցիչեցի Գաղդիացւոյն խօսքը և իսկոյն մահմետականաց գերեզմանոցը խոտորեցայ, որպէս պահապանին առաջնորդելովը, շուտ մը գերեզմանոցին ոտին վրայ յիցեալ՝ ազնչոն այն հնդկական տեսարանը աչքիս առջևն պարզեցայ։

Ընդարձակ միջոցի մը մէջ չորս հինգ խարուկաց բոցը դեռ ևս կը բարձրէր, և անոնցմէ բարձրացած ծուխը՝ ճենճերեալ դիակաց հոտը մթնոլորտին մէջ կը սփռէր։ Ցետին յուզարկաւորութեան խմբիկը եղած տեղէն քանի մը քայլ անդին դագաղեալ՝ դիակը գետինը հանգչեցուցեր էր։ Ոմանք ի խմբէն, գուցէ մերձաւորք, հոն մոտ եղող փայտավանաւէն, խարուկին կարևոր փայտը ստացած՝ բերին խարոյկը կազմեցին, դիակը վրան հանգչեցուցին, և նոյնը դարձեալ ուրիշ մանր փայտերով ծածկեցին։

Այս ամենայն այսպէս հանդերձեալ, մին ի յուզարկաւորաց, որ թուէր մերձաւորա-

digitised by A.R.A.R.@

գոյն ազգական, ձեռքը ջուշ մը առած՝ մեր-ձեցաւ խարուկին և անոր չորս անկեանց հուր մատոյց. և մի և նոյն ատեն չրջակայ յուզարկաւորք վրան ի գալին նիւթ մը թա-փելով բոցը արծարծեցին։

Եւ մինչ այս և մինչ այն, աչքս յան-կարծ ուրիշ խարուկի մը գնաց, որու վը-բայ դրուած բարձրաձասակ դիակին սը-բուռը, խարուկէն դուրս երկնցնելով չէին այրեր։ Ցեանեմ Հնդիկ մը երկայն երկթէ ձողով մը մերձեցաւ, կրակը խառնեց արծարծեց, և ապա ձողովը զարկաւ այն անբզ-գայ սրունիկ, ջախջախեց, և անառարկե-լաբար, ինչպէս թէ փայտի կոտորը բլա-յին, խարուկին վրայ նետեց որ հրով ըս-պառնիս։

Այս ատենս նորեկ դիակին բոցը արծար-ծեալ վեր կը բարձրանար և դիակը այրե-լով կ'ուռեցներ. ջերմութենէն պատճա-ռեալ կողերը բացուց ի սրունից չրջբը-ղալ չարժմունք մը տպաւորեցին. և ինչ-պէս թէ սաստիկ ցաւ զգայ՝ մին ի սրու-նից իր վրան չրջելով խարուկէն դուրս եր-կընցաւ։ Պատուրները կ'ուռէին, կը ճայ-թէին, զգուելի տեսարան մը տալով, որու հանդուրժել չէր հնար. թոզի տեղին ու հեռացաւ։

Ըստ հնդկային սովորութեան խարոյկը վառելէն ետքը, երբ դիակը բոցակերպ ե-ղանդ մը կ'առնու, եթէ մեռեալը պրահ-մին մրն է, որդին երկրքէ ձողով մը կը մերձենայ և ամուր մը գանկին կը զարնէ կը ջախջախէ, որպէս զի հոգին աղատ անցք գտնելով չուտ մը մարմնէն ելլէ։

Երբ ամենայն ինչ այրելով կը սպառի, մոխիրը ապիս անդին կը սիրեն, խա-րուկին տեղը ջրով կը թրջեն, և ապա ոս-կերաց սակաւ մնացորդք անկիւն մը կը դիզեն։ Ըստ ինքեան, բաց ի դիակին գարշ նեռութէն, այս հնդկային յուզարկաւորու-թեան արարողութիւնը ուրիշ խորչելի բան մը չունի. նա մանաւանդ այս առաւելու-թիւնս ունի, որ մարդ աներկիւղ կ'ելլայ առերեսոյթ մահուամբ թաղուելէն։

Սակայն ըստ այլ և այլ տեղեաց Հընդ-կաստանի՝ այս արարողութիւնք կը տար-բերին, կամ թէ ըսեմ բարբարոս և անգութ կերպարանք մը կ'առնուն։ Ըստ ասելոյ Գաղղիացւոյս, ի Պէնարէս կամ Գանգէ-սին չրջակայքը, հազիւ թէ Հնդիկ մը ինք-գինքը ծանր հիւանդ կը զգայ, խսկոյն օրաս-ցոյցը զնեալ կու տայ, որ տեսնէ թէ ինչ համաստեղութեան ներքև կը գտնուի, և ըստ այնմ տանը քուրմը կը կանչէ, որ կրո-նական արարողութիւնները կատարելովք չար ոգիները հալածուին և ինքը իւր առող-ջութիւնը վերստանայ։ Ցեանեմ անհրա-ժեշտ առաւօտ և իրիկուն ազօթք կը մա-տուցանեն տանտիրոջ առողջութեանը հա-մար, և մայրը կամ կինը ուխտագիր կ'ելլայ դից մասնաւոր ընծաներ տալու։ Եւ որպէս զի դիք հաւատարիմ համարին իւր այս ուխտը և թէ անխարդախ սրտիւ պէտ-ք կատարէ իւր խոստմունքը, մասնաւոր ստակ կը դնէ ի պահեստի։

Բայց կ'ելլայ որ հիւանդութիւնը անբու-ժելի կը վճռուի և մահը անհրաժեշտ ու մերձաւոր կ'ելլայ։ Մահացու հիւանդը կը վերցնեն ու հանդիսաւոր եղանակաւ Գան-գէսին գետափը կը տանին։ Եւ զարմանա-լին այս է՝ որ շատ անգամ փոխագրութիւնս երկու, երեք և աւելի մղոն հեռաւորութե-նէն կ'ելլայ. և հիւանդը բոլոր այն ճամբան ոչ միայն սաստիկ ցնցմանց նեղութիւնը կը կրէ, հապա նաև արևուն սաստիկ կիզիչ զօրութիւնն ալ անոր ոգիքը կը քաղէ. ա-նանկի որ շատ անգամ փոխագրութիւնս մա-հագոյժ կ'ելլայ գետ գեղը չհասած։

Հանդերձ այսու սակայն ալ կ'ելլայ որ հի-ւանդը ողջմբ գետափը կը հասնի. հոն յուզարկաւորք, ի բարեպաշտութենէ ձը-գեալք, կը ջանան անոր մահը երագել. նուէրներուն գետին տալէն կ'առնուն ու հի-ւանդին բերանը կը լցնեն. և որպէս թէ այս բաւական չելլար, ամբողջ մարմնովը վերուցած, գետափը ջրին մէջ կը պառկեց-նեն և մերթ մեր մերթ ողջոյն գլուխը ջրին մէջ կ'ընդմտնեն Այլ կ'ելլայ երբեմն որ հան-գերձ այս ամենայն արարողութիւններով, որով հիւանդին մահը երագել կը ջանան, գրեթէ հոգեվարք Հնդկին մարքը կը դի-մանայ ու մահու դէմ կը կռուի առանց ընկճելու։ Ամենայն առթիւ յուզարկաւո-րաց համբերութիւնը կը հատնի, և հի-ւանդը վերցնելով միւս անգամ տունը կը դարձնեն։

Եթէ մեռնելիքը ծեր ոմն է, այս դարձը ոչ միայն գայթակղական, այլ և ամբարիշտ կը համարի, եթէ այրի կնիկ մը ելլայ այն-պիսին՝ այսու և ևս առաւել չարագուշակ կը համարի։ Նկատմամբ այրի պառաւի մը համար կը զուրցեն թէ յետ տասնըհինգ անգամ Գանգէսին ջրերուն մէջ գլխով մարմնով ընկղմուելէն, միշտ մահու դէմ յարդթանակելով տանը հինգ անգամ տուն դարձուեցաւ. և սակայն ողջոյն տարի մը արհամարհեալ ու նախատակոծ ապրե-լէն ետքը, չկարենալով այլ ևս հանդուր-ժել, միտքը հաստատեց կեանքը կնքելու, և այսու դիտմամբ ինքզինքը ողջ ողջ նե-տեց ու խեղդամահ եղաւ Գանգէսին ջրե-

digitised by A.R.A.R.@

լուն մէջ, որու ճամբան դէպ ուղիղ երկինքը կը հանէ, տարակոյս չկայ։

Անգամ մը ալ բարձրահասակ Հնդիկ մը մահու դուռը հասնելով, կ'առնեն գինքը ու մահճակալի մը վրայ կը դնեն և թափոր բարար դէպ 'ի Գանգեսի ափունքը կը յուզարկուին։ Ճամբան այնպէս կ'երևար ինչպէս թէ վայրկեանէ վայրկեան վերջին շունչը տար։ գլուխը անհաստատ մէկ կողմը կը կախուէր, և գողգոջուն ձեռքերովը կ'աշխատէր աչքերը պաշտպանել արևուն կիզիչ ճառագայթներուն դէմ։ Այս բանս տեսնելով իր որդին՝ որ քովէն կը քալէր, հովանոցովը՝ անոր գլուխը պատսպարեց։ Երբ գետը հասան գինքը գետափին ծայրը հանգչեցուցին սպասելով որ մեռնի։ Ցանկարծ ծարուելով ջուր խնդրեց, որու շերջակայք փութալով ջրի տեղ իրեն կաթ խմցուցին։

Այսպէս երկու օր գետափը մնաց առանց մեռնելու։ Ցուզարկաւորք ձանձրացան՝ գինքը վերցուցին ու ջրին մէջ ինջեցնելով մինչև կուրծք ընկղմեցին։ և այնպէս մահը երագելով յետին շունչը փչեց։

Ուրիշ անգամ մը ալ նմանապէս պառաւ կնիկ մը Գանգեսին գետափը տարուեցաւ։ իր աղջիկները որ ներկայ կը զբաղուէին, տեսնելով որ իրենց պառաւ մայրը մեռնել չէր ուզեր, չէին գիտեր ինչ ընեն։ Ներկայ գտնուող յուզարկաւորներէն սմանք խորհուրդ կու տային որ ողջ ողջ խարուկին վրայ այրեն։ իսկ այլք աւելի խնայութեան միջոց սորվեցնելով խորհուրդ կու տային ողջ ողջ թաղել գինքը։ Սակայն աղջիկները այս խորհուրդներէն և ոչ մին ընդունելով յետ երկայն ատեն սպասելէն՝ որոշեցին միւսանգամ պառաւը իրենց գլուղը դարձնելու։ Վերջին ու երկաթուղայն կայարանը տարին։ այլ լաւն մնացին երբ տեսան որ պաշտօնեայք չուզեցին հոգեւ-

Հնդկական թաղատեղի։

վարք մէկ մը չոգեկոյր ընդունելու։ ճարերնին հատնելով՝ այն աղջիկներն իրենց մայրն ատին և ինչպէս թէ կամ մը ըլլար՝ պատատեցին իբր կապոց և այնպէս տուն յուզարկեցին։

Ժամանակաւ, երբ մեռնողք 'ի ճոխից կ'ըլլային, բաց 'ի Գանգեսին ջրէն՝ բերանը նաև ոսկի և ամեն տեսակ ազնիւ գոհար կը դնէին։ Կուրծքին վրայ դոյտի կոչուած տնկին ճիւղերէն կը հանգչեցնէին, և մասնաւոր կաւով մը ճակատը կը կնքէին։ Սակայն հիմա, գարուս լուսաւորութեան ազդեցութեամբը գուցէ, այս սովորութիւնները և արարողութիւնները երթալով կը նուազին և կարելի եղածին չափ կը համառօտուին։

Այս ամենայն արարողութեանց վրայ խորհրդածելով՝ կրնանք ըսել թէ Հնդկի մը մահուընէն աւելի գէշ մահ չկայ։ 'Ի բաց թողլով այն չարչարանքը որ գետափը ընկղմանած ատեն կիզիչ արևուն բապառիչ ճառագայթներէն կը կրէ, մինչդեռ նաև՝ մահը կրագելու դիտմամբ՝ մերթ ընդ մերթ գլխով մարմնով ջրին տակ կ'ընկղմուի, նաև ականջէն 'ի վար յարատև և չարունակութեամբ անհամար դիզ լիթանիա մը կը յեղյեղն, յուսալով թէ այնու գինքը սրբութեամբ և արժանապէս կը պատրաստեն այս յետին ճանապարհորդութեան։ Այլ շատ անգամ բնութիւնը մարդկիներէն աւելի զթած, այն խեղճ Հնդկին մահը յիրաւի կ'երագէ. որմէ ետքը դիակը կը վերցնեն և այրելու սեփական վայրը կը տանին։

Այն տեղը հասնելով դիակը նոր լաթի մը մէջ կ'ամփոփեն ու կարագով կ'օծեն։ Այսպէս նոր անօթոյ մը մէջ ջուր ու դոյտի և կոստատի հունտեր լեցուցած, բոլորը մէկ տեղ մեռնողին գլխուն վրայ կը թափեն։

Այս ընելէն ետքը դիակին վրայէն հին

digitised by A.R.A.R.@

գոհարեղէնները կը բռնուն, և անոնց փոխանակ նորեր կը հոնեն։ Հոսելիս խարոյկը հալուէի և սանտալի հոտաւէտ փայտերով կը կազմեն. իսկ աղբատաք, որոց միջոցք չեն բաւեր այնքան ծախուց, ամեն զոհ կ'ընեն որ գոնէ հասարակ փայտերուն հետ քանի մը կտոր սանտալ ալ գտնուին։

Խարոյկը այսպէս պատրաստելէն յետոյ դիակը վրան կը հանդչեցնեն։ Ապա պրահմին մը վրան աղօթիներ կը կարդայ, բերանը կարագ կը լեցնէ, և աչքերուն, քիթին, բերանին և ականջներուն մէջ ոսկի հատիկներ կը դնէ։

Յետ այսորիկ եթէ մեռնողը արդի ունի անոր կ'ինչայ խարուկին կրակ տալ. ապա թէ ոչ պարտքը մերձաւորագոյն ազգականին է։

Խարուկին վրայ նաև կարագ ու ձիւթ կը թափեն. և դիակը նոր կասէի մը մէջ պատած, եթէ էրիկ մարդ է, երեսը դէպ 'ի վեր երկինքը կը դարձնեն, իսկ եթէ կնիկ է, դէպ 'ի վար գետինը կը շրջեն. գլուխը դէպ 'ի հիւսիս, ոտքերը դէպ 'ի հարաւ։ Որդին կամ մերձաւորագոյն ազգականը ձեռքը վառած յարդ բռնած՝ երեք անգամ խարուկին բոլորը կը շրջի, միշտ երեսը դէպ 'ի հակառակ կողմը դարձուցած, ու վառած յարդը մեռելոյն բերանին կը դըզցընէ։ Որմէ ետքը բոլոր շրջակայ յուղարկաւորք կը մօտենան ու խարոյկը կը բըռընկցնեն։ Կրակը գրեթէ երկու ժամ կը տևէ։

Արարողութիւնը լմնցուցէն ետքը խարուկին տեղը ջրով կը լուանան, և փոքր փոս մը կը բանան, որպէս զի խարուկին ջուրը Գանգեսի ջրին հետ երթայ խառնուի։ Յետոյ անօթ մը կ'առնուն ու ջրով կը լեցնեն և բերանը հողէ պնակով մը կը ծածկեն։ Ապա մէկը ձեռքը բրիչ մը կ'առնու, և անոր կոթովը զարնելով ամանը կը խորտակէ ու ջուրը կը վաթի։ Ետեւէ ետքը սմին յուղարկաւորք հերիսպոյ կանչելով կը մեկնին։

Նախնի օրէնսգիր մը պատուիրած էր խարուկին վրայ այս գեղեցիկ խմսաղը արտասանելու։

— « Ցիմար է այն մարդը որ կենաց յարատեւութիւն կը բնուէ, մինչդեռ կեանքը պանանի կոճպին նման դիւրաբեկ է, և կամ ծովու փրփրոյ պէս վազանցիկ։ Ինչ կ'օգտէ աչխարել այն մարմինը որ հինգ տարրերէ ձեւացած ըլլալով միւսանգամ առ նոյն հինգ գոյացուցիչ սկզբունս կը վերադառնայ, որ այնուհետև կենաց ժամանակը գործածներուն հատուցումը առնու։ Երկիրը կ'ոչնչանայ, ովկիանոսը, և նոյն իսկ դիր կ'անցնին։ Ինչպէս կարելի է չսպասկանի այն ոչինչ էակը, այն մահկանացու մարդը ինչ որ իսնայրն ու ստորին է, վերջապէս հարկ է ոչնչանայ։ Ինչ որ բարձրը է՝ հարկ է որ կործանի. ամենայն բազդաբեալ մարմինք հուսկ ուրեմն պիտի լուծուին և կեանքը մահուամբ պիտի վերջանայ։ Մեռելոյ ստուերը ազգականայ թափած արտասուաց վրայ կը գծկամակին. մի հնձէք ուրեմն, այլ մտադիրութեամբ մեռելոյն յուղարկաւորութիւնը կատարեցէք »։ —

Դ.

Սուդիք կամ մեռելոյ վրայ ինքնայօժար զոհք։

Ըստ հնդկական սովորութեան աղջկունք տասնուերկու կամ տասնվրեք տարուան կը կարգուին, և ասէպ տարիքն առած ու ծերացեալ մարդոց հետ։ Այս բանս այսպիսի չար հետևանք մը կ'ունենայ, որ բնականապէս այրը նախ բնութեան օրինաց հպատակելով մեռնի, և այնուհետև այրի մնացեալ կնիկը ոչ միայն երկրորդ ամուսնութեան չի կրնար անցնիլ, այլ նաև և ոչ իսկ նոյն տանը մէջ կրնայ ապրիլ, առանց ամենուն քաստմելի և արհամարհելի երևնալու։ Ուստի այրի կանայք աչխարհիս նախատինքէն խուսափելու ըղձիս, առ ոչինչ համարելով դառն մահը որ քան զվատահամբաւ կեանքը աւելի քաղցր կը թուի իրենց, մինչև այս յետին ատեններս սովոր էին ահաւոր մահուան մը ձեռնարկելու, ողջ ինքզինքին իրենց էրկանը խարուկին վրայ այրել տալով։

Բայց հիմայ Անգղիոյ գաւառականին զօրութեամբ՝ թէպէտ և այրի կանայք ալ իրենք գիրենք չեն այրեր, սակայն և այնպէս խարուկին վերցուիլը կ'ափսոսան. որովհետև այ ընտանեաց մէջ ապրիլ անհանգըստելի է իրենց. ամենուն ատելութեան և արհամարհութեան նիւթ են, ամենէն կը նախատուին, և մինչև անէն ալ կը մերժուին։ Հարկ կ'ըլլայ այնուհետև իրենք գիրենք վատթար կեանքի մը զոհ ընեն, որ խարուկին ազդած կրօնական մխիթարութիւնը չտնի։

Այս չար հետևանքը բնաջինջ ընելու համար հետամուտ են հիմա Հնդիկ յառաջադէմ ընկերութիւնները. որոնք ամենայն հիգն կը թափեն որ այրի կանանց միւսանգամ ամուսնանալու իրաւունքը ստանան. և ամենայն զօրութեամբ կը կռուին այն նախապաշարմանց դէմ որ այս բանիս կը հակառակին։

digitised by A.R.A.R.@

Լ՝օթը ութ տարի յառաջ՝ ի Սիբանտարբրոս ջերմեռանդն ու խստակրօն կենաց ապրող Հնդիկ մը կը մեռնի. անոր այրի կնիկը, որ դեռ ևս երիտասարդութեան հասակ ունէր, ու փոքր մանկիկ մը կաթովը կը սնուցանէր, անանկ սաստիկ ցաւ զգաց այս անգութ մանկիկի կորստեանս վրայ, որ այլ ոչ կերակուր առնուլ ուզեց և ոչ ջուր խմել։ Ջանաց թոյլատուութիւն առնուլ որ իւր էրիկանը հետ խորտկին վրայ մեռնի. այլ բնական էր որ վարչութիւնը զլանար։ Բայց երբ տղուն սնունդը պակսելով ան ալ մեռաւ, կնիկը զանխղաբար՝ իւր ձեռքը խարդկի մը չմնեց, անկողինը վրան դրաւ, և ապա ինքն ալ վրան ելլելով ու տղուն դիակը գրկացը մէջ սեղմելով, խորտկին կրակ տուաւ, և այնպէս մոխիր դարձաւ։

Անդպիական վարչութիւնը թէպէտ և արթնութեամբ կը հսկէ այսպիսի բարբարոս զոհերը խափանելու, հանդերձ այսու, կ՝ըսեն, թէ կրօնամոլք ամենայն ջանք՝ ի գործ կը դնեն ուր կրնան վարչութեան հրամայողութիւնը՝ ի դերև հանելու. անանկ ծանուկ կը պահեն իրենց այս դիտաւորութիւնը որ թէ և վարչութիւնը կասկած առնու, ոչ տեղին կրնայ իմանալ, ոչ անձը և ոչ զոհին ժամը։

Կ՝ըսեն թէ ոչ շատ տարի յառաջ իշխանաւորի մը երիտասարդ կնիկը սանկ անդարմանելի ճախորդութեան մը հանգիպելով անվրէպ ուզեց իւր էրկանը հետ այրիլ։ Եւ առ այս կը մղէին զինքը գլխաւորապէս իւր ազգականք, որ անոր սեփական ժառանգութենէն մեծ շահ ունէին։ Զոհէն յառաջ սովորութիւն էր իրեք օր զոհուելի անձը հանդիսաւորապէս ու թափթարար քաղքին այլ և այլ տաճարները պտըտցնել. գիշեր ցորեկ նուագարանաք, պարուք թմբեցուցիչ ըմպելիքաք զբաղեցնել, պատրաստելով զինքը որ տրիտրար և անդադրող սրտիւ լրացնէ իւր առաջադրութիւնը։ Այսպէս և զայս եղկելին բազմաթիւ խմբով, երաժշտաք, զուսանաք, ըսպասաւորաք և այլ անհամար ուղեկցաք Կալկաթա ժամատեղ բրած, ցորեկը մերթ այն տաճարը զոհելու և ազօթելու կը տանէին. իսկ գիշերը խմբովին քաղքէն դուրս ելլելով՝ վրաններու տակ կը պատսպարէին։ Հոն ողբայն խումբը ելուժշտաց ու պարերգակ զուսանաց հետևելով՝ իրենք զիրենք անոն տեսակ ցոփ զբօսանաց կուտային։ Նպատակ ունենալով միշտ զոհուելիքին առաջադրութիւնը վառ պահելու։

Այս արարողութիւնը երեք օր քշեց, այլ միշտ գիշերային օթևանաց տեղին փոփոխելով՝ ի լուսանալ չորրորդ առաւօտուն այն բազմաթիւ մարդոց խումբը իւր շամանդաղ ցնդելով անյայտ եղած էր, առանց մէկի մը կասկած կամ ազդ տալու, և առանց իմացուելու թէ ուր կամ դէպ որ կողմը գնացած էր։ Զոհին ժամադրութեան տեղն այն վրայ ամենայն գաղտնութիւն պահած էին, և միայն յետին ժամուն իմացուցած էր խմբին։ և այնպէս իւրաքանչիւրը այլ և այլ ճամբով հոն փութացեր էին աբարողութեան լրումը տալու, որ ապա անտառաց լռութեան մէջ կը թաղուէր։

Այլ ես արժան կը համարիմ հոս այսպիսի զոհի մը ստորագրութիւնը ընել, ականատեսի մը բերանէն առնելով, որ ամեն յառաջ ըստ դիպաց սանկ անգութ տեսարանի մը կրցեր էր ներկայ գտնուիլ։

— Այրին, կ՝ըսէ, երիտասարդ, գեղեցիկ ու բարեկազմ մէկ մըն էր. և անոր տեսքը սիրտս կը կեղեքէր, մտածելով թէ ինչ անհանգուրժելի տանջանք կը պատրաստէր այն քրմաց ու ժողովրդեան անողոքելի կրօնամոլութիւնը։ Առանց մեծ դժուարութեան և որչափ հնար էր մերձեցայ խա-



Պալտնարան Քարտուղարի։

digitised by A.R.A.R.@

բուկին, որպէս զի ամենայն ինչ աղէկ տես-նամ, առանց այն ահաւոր տեսարանէն բան մը կորսնցնելու։

Այրին քովը քանի մը ամսուան անմեղ տղայ մը ունէր. սակայն անանկ անտարբեր աչքով կը նայէր վրան, որ կարծես թէ գերագոյն պարտականութեան մը ըղ-գացմունքը բոլորովին յաջոդուած էր դինքը, բառնալով իրմէն ինչ և իցէ երբ-կրային առարկայի մտածութիւն։ Թէպէտ և կը տեսնար որ չորս դին իրեն համար զարհուրելի պատրաստութիւններ կ'ընէին, 'ի վերայ այսր ամենայնի երեսին վրայ վը-սեմ հանգարտութիւն մը կը փայլէր։ Զէր կրնար զարմանքս զսպել մտածելով թէ ինչպիսի անդողդոջ սրտիւ և արիական ու հաստատուն դիտաւորութեամբ դիմա-գրաւ կ'երթար այնպիսի դառն մահու։

Բայց այս պատրաստութեանց ժամա-նակը շատ երկարելով դիտելի որ սար-սոյն զգացմունքները երթալով կ'այլայլէին։ Անոր սև աչքերուն վրայ յայտնի կերպով ջղային այլայլութիւն մը կը տեսնուէր, ու հայեցուածքին վրայ զարհուրանքը յայտ-նապէս կը կարդայի։ Ցարակոյս չկար որ սաստիկ ափիոնով ջանացած էին առժա-մանակեայ կերպիւ թմրեցնել անոր դգա-յարանքները, որովհետև միշտ այդպիսի առթից մէջ, սանակ միջոց կը բանեցնեն, որպէս զի զոհ ըլլուողին երկիւղը հանգար-տեցնին և արիութիւն ստանալ տան քա-ջալէս դիմելու ընդդէմ մահու։ Բայց ժա-մանակը դեղին զօրութիւնը կոտրելով, այ-րին կամաց կամաց կը սկսէր սթափիլ այն արուեստական թմրութենէն, միտքը իւր գործունէութիւնը կը սկսէր ստանալ, և բնական էր որ երկիւղն իսկ վրան տիրելով արտաքուստ ալ տեսնուէր։ Իւր շարժ-մունքներէն կը գուշակի որ վայրկեանէ վայրկեան տագնապը երթալով կը շատ-նար։ Այլ եթէ դիւրին էր գուշակել անոր ներսի դին անցածը, միանգամայն դիւրին էր գուշակել նաև որ իւր առաջադրու-թեանը վրայ հաստատուն կենալու ըրած ջանքը՝ սովորական արիութենէ մը առաջ չէր գար։ Իր վրայի գարգերը մէկիկ մէ-կիկ հանելով մերժ եղող բարկամաց բաժնեց։ սակայն այս գործը անուշադրու-թեամբ ու վերացեալ կերպիւ գործադրեց ինչպէս թէ ըրածը չհասկնար. և այս յայ-տնի նշան էր թէ ներսէն կրած բարոյա-կան տանջանքը՝ իւր մտաւոր կարողու-թիւնները երթալով կը տկարացնէր։

Այս առենն անոր փոքրիկ զաւակին ճիչը արթնցուց 'ի նա մայրական գութը. աչքին վրայ գորովոյ խանդաղատանք մը փայլե-ցաւ. շրթունքը սկսաւ գողդոջալ, կու�քը բաբախել, շնչառութիւնը բռնուեցաւ ու ներանը թեթև մը բացուեցաւ. նշան թէ իւր այլայլեալ միտքը գարձեալ 'ի նա կը վե-րադառնար։ Ղեռուեցաւ դէպ 'ի տղան, յարձակեց զայն պահպանելու ձեռքէն, ա-ռաւ սեղմեց իւր գրկայը մէջը. արցունքը իջաւ աչքերէն ու հեծկլտանքը ականջս խայթեց։ Օգնութիւն խնդրել մըն էր. կա-րելի էր որ մարդու սիրտ հանգուրժէ։ Կ'ուզէի ազատել դինքը այն դառն պայմա-նէն. բայց ինչպէս հնար էր երբ ինքը իւր կամքը վճռած էր իւր ճակատագիրը։ Այս վայրկեանէս յայտնի եղաւ բոլոր հանդի-սականաց որ յետին օրհասին մտածու-թեամբը իւր արիութիւնը երթալով կը նուազէր։ Աչքերնուս առջեւն կանգնած հո-գեվարք հոգւոյ մը անբարբառ յուսահա-տութեան կենդանի պատկերը կու տար։

Արարողութիւնը կատարող պրահմինը վախնալով որ այրուոյն արիութիւնը բոլո-րովին ազատի, հարկ սեպեցին գործին լը-րումը փութացընելու. անոր համար հեռա-ցուցին քովէն բոլոր աղգականները, բա-րեկամները ու բոլոր հանդիսակիցք։ Անով խարուկին բոլորը շափաւոր ընդարձակ մի-ջոց մը ձեւացաւ, ուր մնային միայն այրին և պրահմին քովը։ Բայց նախ քան զայս քուրմերէն մէկը ծոր գրկէն բռնութեամբ քաշեց առաւ տղան, և առանց երկուքին ցոյն ուշ դնելու ուրիշի մը ձեռքը յանձ-նեց։ Այն առենն վերջի գեղեցկութիւն մը նկարեցաւ այրուոյն դիմաց վրայ։ Գիտնա-լով թէ այս առաջին բռնութենէն ետքը ինչ պիտի հետևէր, ալ բնութիւնը չկրցաւ դասել. գեսինը ծունկ կրկնեց, աչքերը եր-կինքը վերուց, ու քիչ յուսահատութեամբ ձեռքերը մէկմէկու բերելով սեղմեց։ Այն առեն պրահմին մը, հանգարտ կերպարա-նոր մերձեցաւ իրեն, ձեռք տուաւ որ կանգնի, և ուրիշ պրահմինի մը օգնելով դինքը խարուկին քովը տարաւ։ Բայց այր-րին դէմ դրաւ, և յուսահատութիւնը վը-բան անանկ ուժ բերաւ՝ որ երկուքին ալ բռնութեանը յաղթանակեց։ Այս տեսնե-լով միւս պրահմինը, շտա մը երկուքին օգնութեան վազեցին. և ամենը միաբան բռնի մղելով այն թշուառ այրին խարու-կին մոտ տարին։ Խարուկին փայտերն արդ-դէն ճարպով օծած էին, որպէս զի շուտով բռնին, և այս բանս կերպով մը ընդհան-մն է որ կ'ընեն այն անձին որ ինքնակամ ինքզինքը կը զոհէ. որպէս զի մահը երա-գելով տանջանքին միջոցը կարճի, այլ և միանգամայն փախուստն խոչ խափանեն։

Այրին օրհասին արհաւիրքը զգալով

digitised by A.R.A.R.@

տկտաւ ահռելի ձայնիւ աղաղակել. բայց մի և նոյն ատեն թմբկաց ու փողոց զարհուրելի աղմուկը, և միանգամայն չրջակայ կրօնամոլից աղաղակներն՝ անոր վշտաց ձայնը խեղդեցին։ Ալ այնուհետև անոր բոլոր ճիգը անոյն եկաւ. բռնութեամբ խարուկին վրայ ջչեցին, ուր ինկաւ ոգեսպառ։ Պրահմինք վրան իյնալով խարուկին վրայ նստեցուցին, ծնկուընբուն վրայ էրկանը գլուխը դրին. ապա խարուկին փայտերուն տակը դիզուած յարգին կրակ տալով անմիջապէս ծխախառնրոյը ամէն կողմէն վեր բարձրացաւ, պատեց գլեղհ Հընդիկ այրին, և հանդիսաւոր աչքէն անհայտ եղաւ։



Ցիլատակարան Թագուհւոյն։

յայտ ըրաւ։ Պրահմինք մի և նոյն ատեն վախնալով՝ որ չըլլայ թէ այն անհնազանդութիւնի հոգեվարքին ժամանակը չժուժալով ինքզինքը խարուկին վար նետէ, ձեռքերին երկայն պամպու եղէգ չենած ձողեր առած, ի հեռուստ վրան կոխելով բոլոր իրենց ուժովը՝ զինքը խարուկին վրայ անշարժ բռնեցին։ Բարեբաղդաբար կրակին բռնութիւնն ու երագութիւնն այն ատենանի էր՝ որ այն տհաւոր տանջանքը երկայն չքշեց։

Երկու ժամ ետքը այն խարուկին ու երկու դիականց տեղը մոխրոյ կոյտ մը մնացած էր. բոլոր հանդիսականք ցրուած էին։

Ե

Աշխարհ կանայք և մեռելոց հոգեհանգիստ։

Նիթէ Հնդկին դիակը երկու ժամու մէջ մոխիր կը դառնայ, զոր հողմը կը ցրուէ առանց հետք թողու, սակայն ընտանեաց կոծը այսպէս չուտ չի լռեր. հարկ է արտաքին ցոյցերով ալ աշխարհ իմանայ իրենց ըրած անգութմանելի կորուստը։ Այս քանիս ծառայելու նպատակաւ կը գտնուի խարակուին մասնաւոր դաս մը կանանց, որոց պաշտօնն է կեղծեալ ցաւոյ արտասուօք հաչակել աշխարհի գնացելոյն առաքինութիւնները և ընտանեաց զգացած անմիսիթար ցաւը։

Վերոյստ 'ի վայր սեւազգեաց, դուրս փողոցը՝ մեռելոյն դրանը առջին՝ խմբովին կը կծկին, ու մեղմաձայն և միակերպ եղանակաւ իրենց ողբոց իմաստները կը հիւսեն, բնականապէս միշտ 'ի գովեստ մեռելոյն։ Եւ որովհետև 'ի բազմամարդն Պոմպէյ չկայ օր՝ որ չատ մը մեռելոց յուղարկաւորութիւնք չըլլան, չկայ նաև օր որ այն կանայք այս կամ այն փողոցը գեանին կծկած՝ իրենց արուեստական կոծը անցաւորաց չվաճառեն մեռնողին դամբանականը հիւսելով։

Ստէպ փողոցէ փողոց չրջելով այդպիսի ոգոյ խմբից կը դիպէի. առ վայր մը գաղարելով կը դիտէի այն կեղծ արուեստաւորաց երեսը, որոնք ցաւ հաչակելով ցաւի զգացմունք չուներին։ Մերթ տասը մերթ տասնըհինգ թուով խումբ խումբ բաժնուած գեանին կը կծկին, գլուխին ծընգաց վրայ կը հանգչեցընեն՝ սև քողի մը տակ ծածկուելով։ Մէկը իրր դասագլուխ՝ մեռելոյն գովեստը կը հիւսէ. միւսներն անոր իւրաքանչիւր պարբերութեան՝ դասագիր ձայնակցին՝ լաց ու կոծ ձեւացընելով. բայց լաց՝ յորում և ոչ կաթիլ մի արտասուաց կը հոսէ։ Ոչ երբեք կը տեսնես որ առհասարակ ամենը մնաց ամիսփամբ իրենց պաշտօնը կատարեն. այլ ընդհանրապէս մինչդեռ դասագլուխը իր փոքր խմբին հետ կ'ողբակցէ, այլք անտարբերաբար աչքերնին ապրիս անկին չրջեցընելով կը զրաղին, և կամ մէջերնին անտարբերաբար կը խօսակցին։

Եւ սակայն այս ալ ոգոյ սովորական տարբերութիւն մըն է, որ ամէն միջոց ունեցող Հնդիկ ընտանիք հարկ է ընել տան 'ի պատիւ և 'ի յիշատակ իրենց մեռելոյն։

Նոյն իսկ գաղթական մարսին այսպիսի սովորութեան կը հետեւի, և իւր կանան-

digitised by A.R.A.R.@

ներն ալ ունի. փոքր տղայ մը չորս օր կ'աշխատին, չափահաս մը մինը օր. լացն ու կոծը առաւօտեան ժամը հնգէն կը սկսին ու երկուքին կը վերջացնեն. իսկ լացողը տան կանայք են, որոց անհրաժեշտ կ'ընկերակցին մերձաւոր ու հեռաւոր ազգականք, գրացիք և բարեկամք։ Յաւակցութեան այցելութեան առաւօտը կանուխկէ մեռնողին տունը կը հաւաքին ու լացին ժամուն կը սպասեն։ Երբ ժամանակը կը հասնի, աշխարողաց դասադասը խը մը հանելով ազգը կու տայ, և ապաւաղելով ամուր մը կուրծքը կը հարուածէ. անանկ որ հարուածոց թնդիւնը մինչև հանդիպակաց տունները կը լսուի։ Երիկ մարդիկ դուրսը փողոցը լրիկ կը կենան. իսկ կանայք մէկմէկու ետևէ ետև լալով մեռնողին առաքինութիւնները կը պատմեն, և թէ որչափ ցաւ կրեց հիւանդութեան ժամանակ, որչափ ճիգն թափեցին խնամող բժիշկք գինքը փրկելու և թէ ինչ եղաւ մեռելոյն վերջին կամքը։ Այս ամենը և դարձեալ ուրիշ որչափ բան կրնան երևակայել, լացով ու հեծկըլտանքով բարձրաձայն կը զուլցեն. և իւրաքանչիւր աշխարող հարկ է որ տասը կամ տասնըհինգ վայրկեան խօսի։

Գեղերը այս մեռելոց կոծը՝ կ'ըլլայ որ ամիս մը և աւելի կը տևէ։ Երբ տանտիկինը իւր դամբանական խօսակցութեամբ ողբոց սկիզբն կ'ընէ, քիչ անգամ կ'ըլլայ որ գինքը թողուն որ ողբը լմնցընէ. ներկայ եղողներէն ամեն մէկը խօսքը բերնէն առնելով անոր տեղ աշխարել կը ճգնի. սակայն տանտիկինը թոյլ չի տար, այլ կ'ընդդիմանայ անոնց ցուցած փութոյն, և այն ատեն սրատաճիկի մրցում մը տեղի կ'ունենայ։ Երբեմն ալ երբ տանտիկինը երկայն աշխարելէն յոգնած՝ դադրելու միտք կը ցուցնէ, « Զէ, չէ, կը կանչեն ամենը միաբան, բաւական չէ. հարկ է որ բոլոր ցաւդ դուրս տաս »։

Ասյսպիսի արարողութեամբ կը վարին բարի համբաւով մեռնողի մը հետ. սակայն իրը միշտ այսպէս չ'ըլլար։ Եթէ մեռնողը չար մէկ մը եղած է ու շատ կրել տուած է, այն ատեն կոծը տրտունջի կերպարանք կ'առնու. աշխարողը կը սկսի անկէ քաշած վշտերը դանգատելով զուրցել. և կամ այլապէս, ընտանեացմէն այս կամ այն անձին վրայ ամբաստանութիւն կը դընէ՝ իբրու թէ մեռնողին շատ վիշտ ու նեղութիւն կրել տուած ըլլայ։ Այնպիսի ատեն կոծը բուռն յանդիմանութեանց կերպարանք կ'առնու, որ ետքը ետքը ամբաստանողին և ամբաստանելոյն մէջ ծանր մեղադրութիւններով ու սաստիկ նախատինքներով կը վերջանայ։

Սակայն հիմա կամաց կամաց Փարսից մէջ այս մեռելոց կոծին չափազանցութեանց չափ մը դնելու հետամուտ են։

Ինչպէս մեռելոյն յուղարկաւորութեան պարտքը այսպէս ալ հոգեհանգիստ կատարելու պարտքը ժառանգին կ'ինայ։ Հոգեհանգիստ կամ մեղաբաւիչ արարողութիւնք կատարելու գլխաւոր ժամանակներն են մահուանէն տասնըմէկ օր ետքը, իւրաքանչիւր ամսոյն վերջին օրը, և հուսկ ուրեմն մահուան տարեդարձին։ Հոգեհանգիստ արարողութիւնք կը կոյանան մեռնողին և անոր ուղղոյն բրինձ, ծաղիկ, ջուր և այլ բաներ նուիրելուն վրայ, որպէս զի անոնց միջոցաւ իւր հոգին կարողանայ բիդրայց երկինքը ելլել. այս բիդրայք կը համարին մարգկային ազգին նախահայրք։

Կը շարունակուի։

Հ. Յակ. Վ. Իսաաբերեան

digitised by A.R.A.R.@